

պատասխան տրուի՝ Մասիս լուռ կը մնայ. իսկ եթէ հաստատական՝
շուրջառը կը հագնի եւ կը սկսի պօռալ.

«Ցաւօք սրտի կը ծանուցանենք, որ մեծապատիւ այս ինչը երէկ
գիշեր իւր մահկանացուն կնքեց ծաղիկ հասակին մէջ. – հարիւր քսան
տարեկան – ի խոր սուգ ընկղմելով իւր ազգականներն, դրացիները,
բարեկամները – հապա իւր պարտատէրնէ՞րը. – եթէ մխիթարուելու բան
մը ունին՝ այն ալ սա է, որ հանգուցեալն կթողու բարեկիրթ զաւակ մը, որ –
խօսք տուած է Մասիսի բաժանորդագրութիւնը շարունակել – ամենուն
համակրութիւնն առ ինքն գրաւած ունի եւ այլն»:

Երբ միշտ այսպիսի լուրերու կը հանդիպիմ Մասիսի մէջ՝ ինքն
իրենս կ'ըսեմ.

«Եթէ հարուստ մը չամուսնանայ կամ չվախճանի՝ Մասիսի ելմտա-
ցոյցը շատ խեղճութեան մէջ պիտի իյնայ:

Սոյն դիտողութիւնն ընելէս ետքը կը հարցունեմ ես ինձի, թէ
Մասիսի խմբագիրն ինչո՞ւ կնունքներն ալ չհրատարակեր եւ կամ
վերջապէս ինչո՞ւ քահանայ չձեռնադրուիր...:

**

2 Սեպտեմբեր

Թրքական մամուլն կրակ ու բոց կժայթքէ մեր ազգին մօրութիւն որ
չբռնկիր: *Թէրճէմանը հաքիքաթ* կեղծ նամակ մը կհրատարակէ այսօր
Դանիէլ Պաղդասարօֆ ստորագրութեամբ: Այս Դանիէլն՝ որ նոյն - իսկ
Թէրճէմանը հաքիքաթին խմբագիր *Միտհադն* է, կ'ըսէ, թէ եթէ թուրք
կառավարութիւնն Հայաստանի ինքնօրինութիւնն չտայ՝ Եւրոպա պիտի
տայ զայն. եւ եթէ Եւրոպան ալ չտայ՝ քանի մը տարիէն Ռուսիոյ նաւեր
պիտի երեւան Սեւ ծովու մէջ: Յայտնի է, որ *Միտհադ* շինծու նամակներով
քիւրդերը գրգռել կ'ուզէ հայերու դէմ. սակայն քիւրդերը պիտի գրգռուի՞ն...
Արդեօք ասոնք գո՞հ են թրքական կառավարութենէն, որուն պաշտօ-
նեայներն մէլօմէկ աւազակ լինելով՝ շատ անգամ կը յափշտակեն՝ ինչ որ
քիւրդերը պիտի յափշտակէին...:

3 Սեպտեմբեր

Փոքրիկ կատակերգութիւն մը.